մոց հանապազ հնչելոց։ Դիրք տեղւոյն զառ ի վայր, կառուցեալ է սա ի գլուխ անդնդախոր ձորոյ, զորով անցանէ ջուր քաղցրահամ, ունելով յինքեան զձկունս մանունս։ Զբօսարան է սա քաղաքին Զամախւոյ և հեռի ի նմանէ կէս մղոնաւ, անընդհատ յաճախեն աստանօր բազմութիւն արանց և կանանց, և առնեն զխրախութիւն յեղանակս ամռան, որպէս պատմեն ծերունիք թէ թիւ տանց սորին ի հնումն հասանէր ցեօթն հարիւր, իսկ այժմ երեսուն[1])։

» Աստ է Հռչակաւոր մենաստան կառուցեալ յանուն սրբոց Հրեշտակապետաց Գաբրիէլի և Միքայէլի ի ձեռն Անտոն և Վլաս վարդապետաց, յօժարակամ նուիրանօք բարեպաշտոն Հայոց, թուին ՌՃԼԷ (1688). ի Հայրապետութեան Տեառն Եղիազարու և ի Կաթուղիկոսութեան Գանձասարայ Տեառն Սիմէօնի և յաջորդի նորին Երեմիայի Հասան Ջալալեանց։ Փոքր է շինուածն և անշուք։ Ունի զսրածայր կաթուղիկէ համակ ի սրբատաշ քարանց։ Կցեալ կայ ըստ այսմ և այլ հոյակապ եկեղեցի յանուն սրբոյն Նշանի ի վերայ վեցից սեանց[2]), որոց երկարութիւնն է երեսուն և երկու քայլ և լայնութիւնն տասն և եօթն, յորդորանօք Անտոն քահանային՝ օգնութեամբ Ջուղայեցի Գէորգի որդւոյ պարոն Պետրոսի և Զամախեցի Յակոբի որդւոյ Թամարին ի թուին Հայոց ՌՃԿԸ. (1719)։

» Շուրջ զմենաստանաւս են սենեակք միաբանից, կառուցեալ աւերակ ի միջնավայր տեղւոջ։

» Առընթեր սենեկաց է աւազան ջրոյ և ի կետրոնի նորին շաղրուան գեղեցիկ։

» Ունի քարաշէն հոյակապ աղբիւր, բայց այժմ աւեր, ընդ նմին և կիսակործան պարիսպ »։

1865 թուին Զամախւոյ թեմի առաջնորդ Դանիէլ Արքեպիսկոպոսն իւր այցելութեան ստորագրութեամբն (Արարատ ամսագիր Ս. Էջմիածնի 1871 մարտ, յերես 352). այսպէս նկարագրէ։

---

[1]) Այժմ 1894 ին 80 տուն, տես վերեւի ցուցակն։

[2]) Սուրբ Նշան ուխտատեղին կցած չէ վանքին, այլ բաւական հեռի 100 քայլաչափ. որոյ նկարագրութիւնն, տես գրքիս մէջ իւր տեղումը։